ENTERPRISE INCUBATOR FOUNDATION

123 Hovsep Emin St., Yerevan 0051, Republic of Armenia
Phone: +374 10 21-97-97 • Fax: +374 10 21-97-77
E-Mail: info@eif.am • http://www.eif-it.com

ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆԿՈՒԲԱՏՈՐ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հովսեփ Էմինի 123, Երևան 0051, Հայաստանի Հանրապետություն
Հեռ. +374 10 21-97-97 • Ֆաքս +374 10 21-97-77
Էլ. փոստ: info@eif.am • http://www.eif-it.com

25.08.14թ. ՁՀՀ/Ք-145

"ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3" ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում
կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

"ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3" ծածկագրով ընթացակարգի շրջանակներում "Ձեռնարկությունների ինկուբատոր" հիմնադրամի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված աշխատանքներ:
Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիրն է ՁԻՀ-ՇՀԱՇՁԲ-14-11/3:
Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել "Ձեռնարկությունների ինկուբատոր" հիմնադրամ, ք. Երևան, Հ. Էմին123 հասցեով, մինչև 2014թ. սեպտեմբերի 4-ը, ժամը 15:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է Ջ. Թումասյանին (հեռ. 010219791): Հայտերը գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:
Հայտերը կբացվեն "Ձեռնարկությունների ինկուբատոր" հիմնադրամի վարչական շենքում, ք. Երևան, Հ. Էմին 123 հասցեով, 2014թ. սեպտեմբերի 4-ին, ժամը 15:00-ին:
Գնման առարկա է հանդիսանում "Ձեռնարկությունների ինկուբատոր" հիմնադրամի կարիքների համար տպագրական աշխատանքների ձեռքբերումը:
"Ձեռնարկությունների ինկուբատոր" հիմնադրամի կարիքների համար տպագրական աշխատանքների կատարման տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 1 հավելվածում:
Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝
ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (հավելված N 2), ընդ որում պարտադիր է նշել մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն.
բ. գնային առաջարկ (հավելված 3): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:
Հայտն անհրաժեշտ է ներկայացնել "ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3" ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով (հրապարակված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում "Շրջանակային համաձայնագրեր" բաժնի "հրավերներում կատարված փոփոխություններ" ենթաբաժնում):
Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:
Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Բ. Ենգիբարյան
Տնօրեն

Հավելված N 1

ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՁԻՀ-ՇՀԱՇՁԲ-14-11/3

ք. Երևան “----------”----------2014թ.

"Ձեռնարկությունների ինկուբատոր" հիմնադրամը, ի դեմս տնօրեն Բ. Ենգիբարյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Պատվիրատու, մի կողմից և ‘‘.....’’-ն, ի դեմս տնօրեն .....-ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կապալառու, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալ մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված աշխատանքներ (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Աշխատանքը և վճարել դրա համար:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական-բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ժամկետում:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Աշխատանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Կապալառուի կողմից չկատարելու դեպքում հրաժարվել Աշխատանքից.

2.1.2 Եթե կատարվել է անպատշաճ որակի՝ սույն Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագի-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Աշխատանքով անհատույց կատարման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց, պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Կապալառուից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կապալառուի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Աշխատանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Աշխատանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

2.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կապալառուն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

2.1.4.1 Կապալառուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա. կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ. խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կապալառուին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ այդ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կապալառուն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու սույն պայմանագրին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը:

2.3.2 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետում նշված ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.3 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը իրականացվել ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով: Ենթակապալի պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

2.4 Կապալառուն պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. Աշխատանքների հանձնման և ընդունման կարգը

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվեում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կապալառուն Աշխատանքի կատարման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 2):

3.2 Արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, Արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) կապալառուի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. Պայմանագրի գինը

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է ..... ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Աշխատանքի կատարման գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման որակի և սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետով նախատեսված գումարի 0,5%-ի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ Պայմանագրի գնի 0,05%-ի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացույցային օրերով՝ Պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքներ կատարելու արդյունքում Կապալառուին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ ուշացված յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (Ֆորս-մաժոր)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Այլ պայմաններ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կապալառուին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու սույն պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում սույն պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կապալառուն պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Սույն պայմանագրում չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների, գնման առարկայի միավոր գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

7.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Կապալառու և (կամ) Պատվիրատու) օգուտները խնայողություններ և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասներն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այդ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգովորող նորմերով և դրանց համար պատասխանատու է Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է ..... էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և 2 հավելվածները հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունք:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու **Կապալառու**

Հավելված 1
“----------”---------- 20 14թ. կնքված N ՁԻՀ-ՇՀԱՇՁԲ-14-11/3
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Աշխատանքի*					
անվանումը	**տեխնիկական բնութագիրը**	**չ/մ**	**քանակը**	**արդյունքի հանձնման վայրը**	**կատարման ժամկետը**
Մեկ լրակազմ նյութերի տպագրություն	Թղթապանակ՝ Չափսը՝ A4 Թուղթը՝ 350գր, գունավոր 4+0 տպագրությամբ , կավճապատ, լամինացված, ներսից երկու կողմում մեկական գրպանիկով՝ թղթապանակի հետ ամբողջական ստվարաթղթից, հաստությունը 5-7 մմ, պատվիրատուի կողմից տրամադրված դիզայնի հիման վրա	հատ	250	ք. Երևան, Հ. Էմին 123	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 31-րդ աշխատանքային օրը
	Նոթատետր՝ Շապիկը և ետնամասը՝ 300գր, գունավոր 4+0 տպագրությամբ , կավճապատ, անփայլ, պատվիրատուի կողմից տրամադրված դիզայնի հիման վրա Էջերը՝ 50 թերթ, 90 գր բոլոր էջերը միակողմանի վանդակավոր, 1+0 համաժողովի լոգոտիպի տպագրությամբ Էջերը միացված մետաղական զսպանակով	հատ	250		
	Գրիչ՝ Սպիտակ պլաստմասե, գնդիկավոր, կապույտ միջուկով, բարձրորակ, եվրոպական չափանիշներին համապատասխանող, թղթապանակին ամրացնելու հարմարանքով, համաժողովի լոգոտիպի 3-ագույն տպագրությամբ	հատ	250		
	Դրոշ՝ Չափսը՝ 2մ*1մ պինդ, ոչ թափանցիկ սպիտակ կտորից, Համաժողովի լոգոտիպի 0.9մ*0.6մ չափսի երկկողմանի գունավոր՝ 3-ագույն տպագրությամբ, ձողին տեղադրելու հնարավորությամբ՝ կարված	հատ	1		

*Աշխատանքի արդյունքը պետք է լինի չօգտագործված: Աշխատանքի արդյունքի տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է Կապալառուն:

Պատվիրատու **Կապալառու**

Հավելված 2
“----------”---------- 20 14թ. կնքված N ՁԻՀ-ՇՀԱՇՁԲ-14-11/3
ծածկագրով պայմանագրի

Պատվիրատու	Կատարող
_____	_____
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը_____	գտնվելու վայրը_____
հհ_____	հհ_____
_____	_____
հվհհ_____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

“….” …… 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ ……

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ “….” ……. 20 թ.

Պայմանագրի համարը՝ ……

Պատվիրատուն, ի դեմս_____ և Կատարողն՝ ի դեմս_____, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը “….” …… 20 թ-ից “….” …….. 20 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Աշխատանքները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը ընդունեց	Աշխատանքը հանձնեց
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
ազգանուն_____	ազգանուն_____
Կ.Տ	Կ.Տ

***Հավելված** N 2*

Հավելված 5
“ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3” ծածկագրով
ընթացակարգի հրավերի

ՁԻՀ -ՇՀԱՇՁԲ-14-11/3 ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

_____-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը

"Ձեռնարկությունների ինկուբատոր" հիմնադրամի կողմից ՁԻՀ -ՇՀԱՇՁԲ-14-11/3 ծածկագրով հայտարարված ընթացակարգին և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը
կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների.
2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող
Ընթացակարգի մասնակցի անվանումը
դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

_____-ն էլեկտրոնային փոստի հասցեն է՝ _____
Ընթացակարգի մասնակցի անվանումը

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____2014թ.
(ամսաթիվը, ամիսը)

***Հավելված** N 3*

Հավելված 5.1
“ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3” ծածկագրով
ընթացակարգի հրավերի

ՁԻՀ -ՇՀԱՇՁԲ-14-11/3 ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆԻ ԱՌԱՁԱՐԿ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված ՁԻՀ-ՇՀԱՇՁԲ-14-11/3 ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,
_____-ն առաջարկում է պայմանագիրը կատարել
Ընթացակարգի մասնակցի անվանումը
համաձայն հետևյալ ընդհանուր գների՝

(ՀՀ դրամ)

Գնման առարկայի անվանումը	Արժեք*	ԱԱՀ*	Առաջարկված գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4=2+3*
Մեկ լրակազմ նյութերի տպագրություն			

* 3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:
**Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____2014թ.
(ամսաթիվը, ամիսը)